«ԼՐԱԲԵՐԻ» 80-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՆԴԵՍԸ

1940 թ. հիմնվելով իբրև ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի տեղեկագիր, այնուհետև՝ ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների» (1943-1965 թթ.)՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսը իր գոյության 80 տարիների ընթացքում հրապարակել և շարունակում է հրապարակել արդիական հարցադրումներով ու նորովի գիտական մեկնաբանություններով, հետազոտությունների արժեքավոր արդյունքներով հարուստ հոդվածներ՝ նվիրված պատմության, փիլիսոփայության, բանասիրության, իրավագիտության, տնտեսագիտության, քաղաքագիտության, հոգեբանության, սոցիոլոգիայի և մշակույթի հիմնախնդիրներին:

Հասարակագիտական ընդհանուր արդիական հարցերի հետ մեկտեղ հանդեսի մշտական ուշադրության կենտրոնում են եղել հայագիտության հիմնախնդիրները, ինչի մասին են վկայում մասնավորապես հայոց պատմության, հայոց լեզվի և գրականության, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, Սփյուռքի պատմության, Արցախյան հիմնախնդրի, հայ մշակույթի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների հրապարակումները և հարցադրումները:

Ուշագրավ և շահեկան է, որ հանդեսին աշխատակցում են ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաև Սփյուռքի և օտարազգի ճանաչված գիտնականներ, մանավանդ որ «Լրաբերը» հրատարակում է հոդվածներ նաև ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով:

Հանդեսը տարիների ընթացքում կատարել է մեկ այլ կարևոր առաքելություն. նրա էջերում կայացել, աճել ու հասունացել են հասարակագետների և հայագետների բազմաթիվ սերունդներ, որոնք լուրջ ավանդ են ներդրել հասարակագիտության տարբեր ոլորտների և հայագիտության զարգացման ասպարեզում:

«Լրաբերին» բնորոշ և ավանդաբար շարունակվող բարձր գիտատեսական մակարդակն ապահովվել է տարիների հոլովույթում նրա խմբագրակազմի պատշաճ պահանջկոտության, մասնագիտական ու կազմակերպական արդյունավետ գործունեության շնորհիվ: Այսօր էլ, պահպանելով անցյալի բարի ավանդույթները՝ հանդեսի խմբագրակազմը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պ. Ավետիսյանի գլխավորությամբ, ձգտում է ապահովել հրապարակումների

բարձր գիտատեսական մակարդակը՝ նպատակ հետապնդելով հասնելու գիտական հանդեսներին ներկայացվող միջազգային չափանիշներին:

Ջերմորեն շնորհավորելով «Լրաբերի» խմբագրակազմին, հեղինակներին և ընթերցողներին հանդեսի 80-ամյա հոբելյանի առթիվ՝ մաղթում եմ նոր նվաճումներ հասարակական գիտությունների և հայագիտության հետագա զարգացման հայրենանվեր գործունեության մեջ:

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական
գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար